

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

20236

*Quercus agrifolia*

361

4-91

1921







20236

1 MAR 2010

ՊԱՏՈՒՅՑ ՓԻՐՔ  
Փրկոթեան Հանգանակոթեան  
ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ  
1920--1921

ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿ ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐՈՒ  
ԵՒ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
Փրկոթեան Հանգանակոթեան ԿԵԴՐՈՆԱԿԱՆ  
ՀԱՆԳԱՆԱԿԻԶ ՅԱՆԶՆԱԺՈՂՈՎՆ  
1921

ԵՐԱՆ ՏՊԱՐԱՆ, ՊՈՍՓԸՆ



361  
4-91

413

ՊԱՏՈՒՈՅ ԳԻՐԳ

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ

ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

1920--1921

ԱՆՈՒԱՆԱՑԱՆԿ ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐՈՒ

ԵՒ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՇՈՒԵՏՈՒՈՒԹԻՒՆ



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ


ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ

ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ

1921

ԵՐԱՆ ՏՈՒՐԱՆ ՊՕՍԹԱՆ

20236





28 AUG 2013

43.177

### ԶՕՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Իմ խորին շնորհակալություներս կը յայտնեմ Ամերիկահայ Գաղութի բոլոր այն ազգայիններուն եւ կազմակերպութեանց, որոնք բարի եղան Փրկութեան Հանգանակութեան յաջողութեան համար բերելու իրենց նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը եւ գործակցութիւնը:

Եւ կը հաւատամ քէ շնորհակալ եմ որբերը եւ այրիները որոնց արցունքները սրբեցիք մասամբ, եւ գոհ է Հայրենիքը մանաւանդ որ իր հեռուոր գաւակները անտարբեր չեն իր ցաւերուն եւ կարօտութեանց հանդէպ:

Ուստի գոհ սրտով եւ հանգիստ խղճով կը մեկնիմ:

ԱՆԴՐԱՆԻԿ



ԶՕՐ. ԱՆԴՐԱՆԻԿ

1274-2002



# ԵՐԿՈՒ ԽՕՍԻՔ

—«o»—

Գոհունակութեան խորունկ զգացումով մըն է որ՝ այսօր հրապարակ կը դնենք Փրկութեան Հանգանակութեան Պատուոյ Գիրքը :

Կեդր. Յանձնաժողովս այսու ոչ միայն կատարած կըլլալայ Փրկ. Հանգանակութեան մասնակցող յարգելի Ազգայնաց իր տուած խոստումը, այլ մանաւանդ կը փափաքի շեշտել ու խորունկցնել Ազգային ներքին կեանքին մէջ՝ հանրութեան Ազգին պէտքերուն նուիրումը դրամներու հանդէպ՝ Հանգանակող Մարմիններու անհրաժեշտ պատասխանատուութեան զգացումը եւ հաշուետուութեան առողջ սկզբունքը :

Ամերիկահայ Գաղութին ազգասիրական գիտակցութիւնը եւ Հայրենիքի կարօտութեանց հանդէպ միշտ զբարբ եւ առատ նուիրաբերող ոգիին Պատուոյ Արձանագրութիւնն է այս գրքոյնը : Այսօր տարիուկէս վերջ՝ անոր վրայ արդար հպարտութեամբ կրնան նայիլ եւ գայն քերթատել՝ միայն ամերիկաբնակ այն անհատներն ու հաստատութիւնները, որոնք ջանադիր եղան գայն յաջողցնելու եւ Հայրենիքի մէջ վերապրող եւ դեռ մաքառող Հայութեան ծով տառապանքը գոնէ մասամբ մեղմացնելու :

1920 տարւոյ սկիզբը, Բարիզի Հայ Ազգ. Պատուիրակութեան Պետին գրաւոր խնդրանաց վրայ, Ազգ. Հերոս՝ Զօրավար Անդրանիկի նախաձեռնութեամբ ու անոր Նախագահութեան ներքեւ Ամերիկայի մէջ սկսած այս հայրենասիրական գործը, բացի իր բարոյական նշանակութենէն, ունեցած է դրական եւ կենսական շատ նշանակելի արդիւնք մը : Ինչպէս ընթերցողը պիտի տեսնէ հաշուեցոյցէն, գաղութիս 61 տարբեր քաղաքներէն գոյացած նուիրատուութեանց ընդհանուր գումարը հասած է 532,036.40 տոլարի, Հայաստանի Հանրապետութ. յատկացում է \$175,440.00 Կիլիկիոյ Հայութեան դրկում է . . . 109,170.00

Ազգ. Պատուիրակութեան (Թրքահայ կարօտելոց) 130,600.00  
Հ. Բ. Ը. Միւրք. Կեդրոնին (կարօտելոց) . 45,000.00  
Պարսկահայոց դպրոցական պէտքերուն . . . 21,001.25  
Բարիզի Հայ Ազգ. Պատուիրակութ. դրկում . 20,000.00  
Կեդր. Յանձնաժողովս ուրախ է յայտնելու մանաւանդ թէ շնորհիւ Ամերիկեան Նիր Իսք Բըլիֆի վարչական ժողովին բարեացակամութեան, վերոյիշեալ գումարներէն իր միջոցաւ դրկումները մեծաւ մասամբ կրկնապատկում են իր գանձէն եւ այդպէս վնասում, որով Ամերիկահայուն Փրկ. Հանգանակութեան արդիւնքով Հայոց ժողովուրդը ստացած կ'ըլլայ մօտաւորապէս երեք քառորդ միլիոն տոլար :

Այս պատկառելի գումարը, գործածուած ու ծախսուած է ոչ միայն որբեր, այրիներ եւ կարօտեալներ խնամելու եւ վերկելու, այլ նաեւ ինչ ինչ տեղեր եւ ամենավնասական քոպէներուն՝ ծառայած է Ազգային ինքնապաշտպանութեան գործին : Այսչափ մը անհրաժեշտ համարեցինք պարգել եւ շեշտել, թէ՛ անոնց համար որ Փրկութեան Հանգանակութեան նպատակներն են թէ՛ անոնց համար, որ զլացան, ըլլալ անտարբերութեամբ եւ կամ այլ անարդարանալի կանխամտածումներով :

Հանգանակութեան սկիզբի վայրկեանէն մինչեւ վերջը մեր Նախագահին՝ Զօրավար Անդրանիկին եւ Կեդր. Յանձնաժողովիս մանաւոր հոգածութեան եւ մտադրութեան աւարկան եղաւ՝ Փրկութ. Հանգանակութեան նիրքական արդիւնքին ԲԱՐԻԶԻ ԵՒ ՆՊԱՏԱԿԱՅԱՐՄԱՐ ՄԱՏԱԿԱՐՄԱՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ :

Պէտք էր՝ որ ի նպաստ Հայրենեաց գաղութիս պարտանանաչ Հայ գաւակաց նուիրատուութիւնք, մեծաբանակ կամ փոքրաբանակ, ամէնէն, Պարկեշտ, Պատասխանատու անձանց կամ հաստատութեանց միջոցաւ գործածուէին նշանակեալ այն նպատակներուն՝ որոնց համար տրուած է յանձնարարութիւն կողմէ դրկում էին :

Այս մտան Յանձնաժողովս կատարած է լուրջ եւ երկար աշխատութիւններ, ձեռք առած է միջոցներ, ունեցած է խիստ ընդարձակ քրքակցութիւններ եւ ուրախ ենք յայտարարելու անոնց արդիւնքով Յանձնաժողովիս գոյացուցած այն ԱՆՎԵՐԱՊԱՀ ՀԱՄԱԶՈՒՄԸ, թէ ՀԱՇՈՒԵԿՇԻ-



ՌԻՆ ՄԷՁ ՆՇԱՆԱԿՈՒԱԾ ԻԻՐԱՔԱՆՁԻԻ ԳՈՒՄԱՐ ԻՐ  
ՆՇԱՆԱԿԵԱԼ ՏԵՂԸ, ՄՏԱԳՐՈՒԱԾ ՄՍՐՄՆՈՅՆ ՁԵՆՔԸ  
ՀԱՍԱԾ ԵՆ ԿԱՍԱՐԵԱԼ ԵՂՃՄՏՈՒԹԵԱՄԲ ԳՈՐԾԱԾՈՒԱԾ  
Է ԻՐ ՆՊԱՏԱԿԻՆ, ԵՆ ԱՌ ԱՅՍ ՈՒՆԻՆՔ ԳՈՀԱՅՈՒՅԻՉ  
ՓԱՍՏԱԹՎԹԵՐ ԵՆ ՍՏԱՅԱԳՐԵՐ :

Ամերիկահայ գաղութին անմոռանալի ու բազմադիւն  
այս գործին վակման եւ անոր հրապարակաւ համարադր-  
ւութեան եւ հաշուետուութեան առթիւ Փրկութիւն. Հանգա-  
նակութեան կեդր. Յանձնաժողովս նուիրական պարտա-  
կանութիւն կը համարի իր խորին շնորհակալութիւնը ար-  
ձանագրել անո՛նց, որք ջանացին Փրկութիւնը. Հանգանակութիւ-  
նը՝ հակառակ գանազան յիշելի եւ անյիշատակելի դժուա-  
րութեանց՝ յաջողցնել եւ Ամերիկահայութեան Պատուոյ  
գործը ընել :

Այս ուղղութեամբ առաջին գիծին վրայ կը կանգնի  
Ազգային Հերոս և ամենուս Սիրելի ՋՕՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿ,  
որ քառորդ դար անվեհեր մեր դարաւոր քշմամոյն դէմ  
Հայրենիքի Սուրբ հողին վրայ անձնագոհ զինուորի մը  
չաբքաշ կեանքը ապրել է եւ իր փառաւոր պայքարը մղել է  
վերջ, եկաւ Ամերիկահայութեան բերաւ իր վսեմ հոգւոյն  
ներշնչումները եւ բոցավառող հուրն ու լոյսը, եւ Փրկու-  
թեան գործը շարունակեց իր սիրած ու պաշտած Ազգին  
դժբախտ մնացորդներուն նիւթապէս օժանդակելու ձեւին  
ներքեւ :

Յանձնաժողովս յարգանքով ու պատկառանքով միայն  
կրնայ յիշատակել թէ հանգանակութեան ընթացքին յար-  
գելի Ջօրավարը իբրեւ մեր Նախագահը անձամբ այցելեց  
աւելի քան երեսուն հինգ մեծ ու փոքր գաղութներ, յանձն  
առաւ երթալ մինչեւ հեռաւոր Քալիֆորնիա, եւ ի զին բա-  
րոյական ու մանաւանդ փիզիքական ծանր գոհողութեանց,  
խօսեցաւ, յորդորեց, համոզեց ու կատարեալ հաստատա-  
մտութեամբ պատուով աւարտեց այն շքեղ գործը՝ որ է  
Փրկութեան Հանգանակութիւնը :

ՊԱՏԻ ԵՆ ԽՈՐԻՆ ՅԱՐԳԱՆՔ ՀԱՅՈՑ ՀԵՐՈՍ ԱՆԴՐԱՆ-  
ՆԻԿԻՆ, ՀԱՅՐԵՆԵՍՅ ՊԱՇՏՊԱՆ ՄԵՐ ՍԻՐԵԼԻ ՋՕՐԱՎԱՐ-  
ՐԻՆ :

Երկրորդ շնորհակալութիւնը կը պարտինք նուիրատու  
յարգոյ Հայ հասարակութեան, որ այր եւ կին, հարուստ

թէ աղքատ՝ սիրով, խանդավառ եւ անկեղծ ոգով, առա-  
տօրէն պատասխանեցին Ազգ. Կոչին, եւ պատիւ բերին մեր  
գաղութին համագործակցութեան փրկարար Ոգւոյն եւ  
Հայրենասիրութեան համբաւին :

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ ԱՄԷՆ ՄԷԿ ՆՈՒԻՐԱՏՈՒԻ :

Յանձնաժողովս առանձին շնորհակալութեան հարկ մը  
կը պարտի Քէթթօ՛ւն ՀԱՅԿ ՊՈՆՍԱՐԳԵԱՆԻՆ, որ Ջօրա-  
վարին քայլերուն հաւատարմութեամբ հետեւեցաւ ոչ մի-  
այն մեծ պատերազմի միջոցին կուռի դաշտերուն վրայ,  
այլ նաեւ Ամերիկայի մէջ եւս շարունակեց իր վարպետին  
հաւատարիմ Աշակերտն ըլլալ ու մեծապէս օգտակար եղաւ  
Փրկ. Հանգանակութեան գործին, Ջօրավարին հետ շրջե-  
լով, բանախօսելով եւ հայրենասիրութեան զգացումներ  
հրահրելով հեռաւոր գաղութներու մէջ :

Յանձնաժողովս չի կրնար մոռացութեան տալ այն ան-  
գին ծառայութիւնը, քաջակերութիւնն ու սրտագին համա-  
կրանքին հետ միացող նիւթական օժանդակութիւնը, գոր  
Ամերիկեան Նիր Իսթ Բըլիֆի կեդրոնին վարիչ Մարմնոյն  
պատուական անդամները, այս անգամ ալ ազնիւ եղան  
տալու Փրկութեան Հանգանակութեան գործին, ոչ միայն  
ապահովապէս փոխադրելով մեր դրկելիք գումարներէն  
կարեւորագոյն մասը, այլ նաեւ Բրօֆ. Ա. Տ. Յակոբեանի  
հետ իրենց ունեցած հանկցողութեան համեմատ կրկնա-  
պատկելով մեծաւ մասամբ այն բոլոր գումարները, որոնք  
յատկացուած էին գուտ կարօտելոց խնամատարութեան  
գործին :

Սրտագին շնորհակալութիւն կը պարտինք նաեւ Ամե-  
րիկայի Հայ Ազգ. Միութեան, Հայց. Առաք. Եկեղեցւոյ  
Կեդր. Վարչութեան, Հայ Աւետ. Միութեան, Հայ Ազգ.  
Ռամկավար եւ Վերակազմեալ Կուսակցութեանց կեդրոնա-  
կան վարիչ Մարմիններուն, նաեւ Հ. Բ. Ը. Միութեան  
Շրջանակային Յանձնաժողովին, ինչպէս նաեւ Գալիֆօր-  
նիոյ Շրջանակին կեդր. Հանգանակիչ Յանձնաժողովին :

Այս Մարմինները առաջին վայրկեանին ընդառաջ գնա-  
ցին Փրկութեան Կոչին, եւ իւրաքանչիւրը տրամադրեցին  
իրենց ծառայութեան բաժինը աւելի կամ նուազ չափով՝  
անվերապահ գործակցութեան կամքով ու յաջողութեան  
հաւատով :



Ի վերջոյ յայտնելով մեր գնահատութիւնն ու սրտագին շնորհակալիքը Ամերիկահայ Մամուլի այն մասին, որ բանիւ եւ գրով Փրկութեան Հանգանակութեան գործը յաջողութեամբ պսակելու ըստ ամենայնի աշխատեցան, չենք կրնար մոռացութեան տալ Հանգանակիչ Յանձնաժողովիս ընդհ. Քարտուղար Ռեսորի Մարտիրոսաց Եկեղեցւոյ Հովիւ վեր. Գաբրիէլ Պետրոսեանի առանց վարձատրութեան մատուցած ծառայութիւնը հանգանակութեանց ընթացքին, ինչպէս նաև Հայ Ազգ. Միութեան Քարտուղար Տիար Գուրգէն Խորեանի գովելի ջանքերը իբր օգնական փարտուղար՝ հանգանակութեան հաշիւներուն եւ Պատուոյ Գրքին պատրաստութեան մէջ:

Շնորհակալութեանց այս շարքին կեդր. Յանձնաժողովս կը յիշատակէ տեղական Հանգանակիչ Յանձնաժողովներուն, գործիչներուն, բանախօսներուն եւ երգիչներուն ազնուութիւնն ու օգտակար ծառայութիւնները, եւ կը փակէ այս նախաբանը, վստահ ըլլալով որ Փրկութ. Հանգանակութեան Պատուոյ Գիրքը ուրախութիւն եւ գոհունակութիւն միայն պիտի պատնառէ ամէն անոնց, որոնք առողջ, հաւաքական եւ Հայ Ազգին ընդհանրութեանը օգտակար գործերու նուիրուած Յուշարձաններուն առջեւ որբնուելու կարողութիւնը տակաւին պահած են իրենց հոգւոյն մէջ:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ  
ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ

ԶՕՐԱՎԱՐ ԱՆԳՐԱՆԻԿԻ

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ԿՈԶԸ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ

Սիրելի Հայրենակիցներ,

Այս պահուն երբ գերութեան դարաւոր գիշերներէն յետոյ, ազատութեան արշալոյսին շողերը կսկսին նշմարուել մեր պաշտելի Հայրենիքին վերեւ, եւ Հայութիւնը կը պատրաստուի ողջունել Ամբողջական Հայաստանի Անկախութիւնը, մեր Ազգը՝ Կողկասէն մինչեւ Կիրիկիա, ամենուրեք կը գտնուի բնաջնջումի իրական եւ ահաւոր վտանգին առջեւ, եւ օգնութեան աղետարչ կոչեր կը լսուին ամէն կողմէ:

Ես, Սիրելի Հայրենակիցներ, երբ քաջարի զինուորներուս հետ, անընկճելի յոյսով եւ հաւատքով, անհաշտ կռիւ կը մղէինք մեր թշնամիին դէմ, անձամբ ակնատես եղայ այն անբուր տառապանքին, որուն մատնուած էին մեր ցեղին հուսկ յետին բեկորները: Թշնամւոյն անկողջ ժը, իր անհամար գնդացիներն ու թնդանօթները չէին կրնար երբեք սարսել ու երկիւղ աղղել մեր սրտին, բայց համատարած թշուառութիւնը որ կը հետեւէր ու կը շրջապատէր մեզ, մերկ, անպատասպար եւ սովալլուկ սրբերու եւ այրիներու սրտակեղծք ճիշերը, որոնք հարիւրներով իրենց աչքերը կը փակէին ամէն օր բրդուծ մը չոր հացի կարօտով, արիւնը կը սառեցնէր մեր երակներուն մէջ եւ սարսուռով կը պատէր մեզ:

Ազգային իշխանութիւնք եւ հաստատութիւններ լիութի գիտակից են այս սպառնալից կացութեան: Ամենայն Հայոց վեհ. Հայրապետն ու Կիրիկիոյ Ծնորհազարդ Կաթողիկոսը քանիցս կոչեր ուղղեցին հանուր Հայութեան: Չեղ ծանօթ են նոսեւ Ազգային Պատրիարքարանի օգնու-



իման ստիպողական հեռադիրները, ինչպէս նաև Բարիզի Ազգային Համալուծարին որոշումով Ազգային Պատուիրակութեան պէս Վսեմ. Պօզոս Նուարրի բացած հանդանակութիւնն եւ ամբողջ Ազգին ուղղեալ կոչը, եւ Հայ Հանրապետութեան նախագահ Պ. Ա. Ահարոնեանի կոչը, որ դեռ վերջերս հրատարակուեցաւ Հայ մամուլին մէջ:

Այս ամէնը մէկ բան միայն կը կրկնեն, մէկ բան կը հաստատեն, այն է թէ այսօր Հայ Ազգին ապագան առաւելապէս կախում ունի այն օգնութենէն, զոր կարելի պիտի ըլլայ անմիջապէս փութացնել մեծ աղէտէն վերադրող Հայութեան բեկորներուն, թէ ինչ որ չկրցան ընել Թուրքին դժոխային ճրագիրներն եւ հուրն ու սուրը, կրնան ի գլուխ հանել անօթութիւնը, մերկութիւնն ու հիւանդութիւնը, եւ վերջապէս զնել մեր բոլոր յոյսերուն եւ երազներուն, թէ ամէն վայրկեան որ կանցնի առանց օգնութեան, հարիւրաւորներ կը տանի մեր սիրելիներէն եւ կը խախտէ, կը քայքայէ Անկախ Հայաստանի հիմերը, եւ թէ հետեւաբար մեծ պատասխանատուութիւն կը ծանրանայ հայութեան այն հատուածներուն վրայ որոնք զերծ մնացին պատերազմի սարսափներէն, եւ այսօր ունին ապահով ու բարեկեցիկ վիճակ մը, որով իրենց անյետաձգելի պարտականութիւնն է անյապաղ օգնութեան ձեռք երկարել առնոց, որ դեռ կը տառապին եւ որոնք միակ յոյսը կը կազմեն մեր նահատակեալ ազգին:

**ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԿՈԶԸ**

Ես երբ Բարիզ կը գտնուէի, եւ կը պատրաստուէի զինուորական Առաքելութեամբ հոս գալ, Ազգ. Պատուիրակութեան նախագահ Վսեմ. Պօզոս Նուարր յատուկ պաշտօն յանձնեց ինձ Ամերիկայի մէջ եւս սիրել եւ սյժ տալ հանդանակութեան, եւ այս նպատակաւ հետեւեալ նամակը ուղղեց ինձ:

Փարիզ, 14 Նոյ. 1919

Մեծայարգ Ժէնէրալ Անդրանիկ,  
Անդամ Զինուորական Պատգամաւորութեան,

Սիրելի Ժէնէրալ,

Երախտապարտ պիտի ըլլամ Ձեզի, երբ իբրեւ Անդամ Զինուորական Պատգամաւորութեան, Ամերիկա կատարելիք Ձեր նախապարհորդութենէն օգտուելով բարեհաճիք գրողի նաև մեր վերջին Ազգային Հանգանակութեան խնդրով:

Սոյն հանգանակութիւնը Միացեալ Նահանգներու մէջ ցարդ չի տուու ինչպէս գիտէք, շատ գնահատելի արդիւնքներ կը փափաքիմ որ բացատրէք մեր Հայրենակիցներուն խնդրոյն որքան կենսական ըլլալը եւ անհրաժեշտութիւնը ամենուն համար մասնակցելու իրենց միջոցներուն ներած չափով այդ հանգանակութեան որ պիտի քոյլարէ Ազգային Պատուիրակութեան մեր պատմութեան այս ամենաբարձրիքի փակակն եւ ամենավնական վայրկեաններուն, գոհաբու մտալու, գէթ մասամբ, ազգային անմիջական պետքերուն:

Ազգային Պատուիրակութիւնը յոյսը դրած է Միացեալ Նահանգներու մեր Հայրենակիցներու առատանտնութեան եւ հայրենասիրութեան վրայ, հետեւաբար յանուն Պատուիրակութեան ամէն իշխանութիւն կուտամ Ձեզի միանալու այն ազգայիններուն որոնք արդէն կը գրադին հանգանակութեան խնդրով, նոր գարկ մը տալու համար անոր:

Հանեցէք ընդունիլ, Սիրելի Ժէնէրալ, յարգալից զգացմանցս հաւաստիքը:

Նախագահ Հայ Ազգային Պատուիրակութեան  
ՆՈՒՊԱՐ

Ես ալ, որ մօտէն տեղեակ էի կացութեան եւ աչքերովս տեսած էի թէ ինչպէս մեր աղէտեալ ազգայինները սաստիկ անասուններու դիակներուն վրայ կը թափուէին, եւ անոնց ոսկորներն ու աղիքները կը յախշտակէին իրարու ձեռքէն, Եւրոպա ժամանելէս անմիջապէս յետոյ կոչով մը գիւմէցի Ազգին. իսկ Անգղիա գտնուած միջոցիս, Մանչես-



թրքի եւ Լոնտոնի նաև Հնդկաստանցի ազգայիններուն պարզեցի ամէն ինչ: Ձեռնարկուած հանդանակութենէն զույսցաւ 50,000 Անգլ. սակի, 50,000 սակի ալ Բրիտանական Կառավարութիւնը նուիրելով, այս դումարը կրկնապատկուեցաւ եւ զգեստեղէնի վերածուելով զրկուեցաւ Կովկաս, ապահով միջոցներով կարօտեալներուն բաժնուելու համար:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Հոս հասնելէս յետոյ փութով եւ ամէն բանէ առաջ ես նուիրական պարտականութիւն համարեցի այս յոյսով զործի ձեռնարկել: Ուրախ եմ որ ամէն կողմէ դաս թէ՛ տայու եւ թէ՛ զործակցելու պատրաստակամութիւն: Խորհրդակցութիւններ կատարուեցան Ազգ. Պատուիրակութեան լիազօր ներկայացուցիչ Բրոֆ. Ա. Տէր Յակոբեանի, Հայ Հանրապետութեան առաքելութենէն Պ. Յ. Քաջազնունիի եւ իր պաշտօնակիցներուն հետ, որմէ յետոյ հետեւեալ նամակն ուղղեցի Հայ Առաքելական եւ Աւետարանական Եկեղեցիներու Վարչութեանց, չորս Քաղաքական Կուսակցութեանց Ամերիկայի Կեդր. Մարմիններուն եւ Հ. Բ. Ը. Միութեան Շրջանակային Յանձնաժողովին:

Պոստոն, Գեկտեմբեր 16, 1919

Յարգելի Հայրենակիցներ,

Զինուորական Առաքելութեամբ Ամերիկա այցելութեանս առիւ Ազգային Պատուիրակութիւնը ինձ պաշտօն շանձնած է եւ խնդրած, որ այստեղ յատկապէս զբաղիմ ազգային հանգանակութեան կարեւոր գործով:

Երկու Պատուիրակութեանց Ամերիկայի Հայ Գաղութին ուղղեալ առանձին կոչերը, եւ իմ կոչը, ցարդ չեն տուած ակնկալուած արդիւնք:

Նկատի ունենալով Հայաստանի մէջ ծայրէ ծայր տի-

րոյ անպատմելի քշուառութիւնը, որպէս ազգային պարտականութիւն առաջադրած եմ իմ անվերապահ եւ բոլորակուէր ծառայութիւնս տրամադրել անմիջապէս հանգանակութեան այդ գործին, որպէս զի այս պատուական ու գոհաբերող հայ գաղութին առատածեւոնութիւնը եւ հայրենասիրութիւնը անգամ մը եւս արտայայտուի արժանաւորապէս, եւ գոհացում գտնեն հայրենիքի ծով կարիքներէն գոնէ մաս մը:

Արդէն Առաքելութեան անդամներէն Բրոֆ. Տէր Յակոբեանի, Տիար Քաջազնունիի եւ Փաստըրմանեանի հետ խորհրդակցութեամբ Նիւ Եորքի մէջ համաձայնած եմք, որ հանգանակութեան արդիւնքը իր նպատակին գործածուի հետեւեալ կերպով:

Ազգ. Պատուիրակութեան միջոցաւ 100ից 30ը Պօլսոյ Պատրիարքարանին. 100ից 20ը Կիլիկիոյ, 100ից 10ը Հ. Բ. Ը. Միութեան զրկուի, իսկ մնացեալ 100ից 40ը զրկուի Հանրապետութեան Կառավարութեան:

Այս հանգանակութեան մասն է նաեւ, որ հանգանակութեան ընդհ. արդիւնքէն \$20,000 միանուագ զրկուի Դարեժի Առաջնորդ Ներսէս Եպս. Մելիք Թանգեանի, իբր նպաստ Սարմաստի եւ շրջակայից դպրոցներու կրթական գործին: Ասկից գատ, նկատելով որ երկար ատենէ ի վեր Կովկաս դուրսէն ապրանք չէ ներմուծուած եւ զգեստի վերաբերեալ բաներ դրամով իսկ գտնել կարելի չէ, որոշուած է որ Հանրապետութեան Կառավարութեան զրկուելիք 100ից 40ով ասկից զգեստ եւայլն գնուի եւ զրկուի:

Կարգադրուած է նմանապէս, որ Ազգային Պատուիրակութեան միջոցաւ Պատրիարքարան, Կիլիկիա եւ Հ. Բ. Ը. Միութեան զրկուելիք գումարները պիտի կրկնապատկուին Ամերիկեան հաստատութեան մը կողմէ:

Ուստի Հայաստանի Ժողովուրդին անունով կոչում կ'ընեմ Ազգային վարչական Մարմնոց կարգին Ձեզի որ բոլորդ հաւասարապէս նուիրէ՛ք ձեր անվերապահ աջակցութիւնը եւ գործօն վսեմ ծառայութեան բաժինը իմ նախագահութեան ներքեւ կատարուելիք ընդհ. հանգանակութեան անյետաձգելի գործին: Ուրախ պիտի ըլլամ ստա-



նալով Ձեր հաստատական պատասխանը եւ գործակցութեան պաշտօնական խօսքը որքան հնար է շուտով :

Յարգանքի ողջոյններով մնամ ,

ԱՆԴՐԱՆԻԿ

Այս նամակիս ի պատասխան՝ հանդանակութեան իրենց սրտագին աջակցութիւնը խոստացան՝ Հայ Առաքելական եւ Հայ Աւետարանական Եկեղեցիները , Վերակազմեալ Հնչակեան եւ Ազգ. Ռամկավարական Կուսակցութիւնները , եւ Հայ Բ. Ընդհ. Միութիւնը :

ԿԱՐԳԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անյապազ հանդանակութեան ձեռնարկելու համար եղած են հետեւեալ կարգադրութիւնները .

Ա. — Հանգանակութիւնը վարելու համար պիտի կազմուի երկու մարմիններ : Մէկը Պոստոն և միւսը Նիւ Եորք :

Բ. — Ամերիկայի Հայ Ազգ. Միութիւնն ու Հ. Բ. Ը. Միութիւնը , ի պատասխան իմ առաջարկութեանս , իրենց ամբողջ կազմն ու մեքենակաւորութիւնը սիրայօժար տրամադրած են այս հանգանակութեան :

Գ. — Միացեալ Նահանգաց , Քանադայի եւ Հարաւայի Ամերիկայի մէջ , ամէն ուր որ Հայ կայ , պէտք է կազմուին Հանգանակիչ Մասնախումբեր , անմիջապէս այս սասին հրահանգներ կը տրուին :

Դ. — Խիստ եւ կանոնաւոր հսկողութիւն ի գործ պիտի դրուի հանգանակութեանց վրայ , արտաքոյ կարգի ծախքեր պիտի չըլլան , եւ սովորական ծախքեր պիտի կրնատուին կարելի եղած չափով :

Պիտի հաստատուին կանոնաւոր տոմարներ , ուր պիտի արձանագրուին բոլոր նուիրատուներու անունը , մա-

կանունը եւ ծննդավայրը : Արձանագրութիւնը պիտի ըլլան մաքուր եւ երկու օրինակ : Մէկ օրինակը Կեղրոն պիտի զրկուի ու զբոյժով մը հրատարակուի . միւս օրինակը պիտի պահուի Մասնախումբին մօտ : Ով որ իր անունը չգտնէ , իրաւունք պիտի ունենայ դիմելու Կեղր. Մարմնոյն ի Պոստոն :

Ե. — Ապառիկ նուիրատուութիւնք պիտի չընդունուին : Ոմն անուան տակ նուէր պիտի չտրուի :

Զ. — Ուրախութեամբ կը յայտարարեմ որ Ազգ. Պատուիրակութեան Լիագոր Ներկայացուցիչ Բրոքս Ա. Տէր Յակոբեանի բրած մէկ կարգադրութեան համաձայն , Հայ աղբիւրէ Հայրենիքի կարօտութեանց յատկացուած ռեւէ գումար , պիտի կրկնապատկուի օտար հաստատութեան մը՝ իբր յաւելեալ նպաստ նոյն նպատակին ու շրջանակին :

Վերջերս Նիւ Եորքի հինգ ազգայիններու կողմէ նուիրուած 65,000 տօլարը այս կերպով 130,000ի բարձրացաւ եւ Բրոքս Ա. Տէր Յակոբեանի միջոցաւ հեռագրով զրկուեցաւ Ազգ. Պատրիարքարան , որ ինչպէս յայտնի է Որբանոցներու եւ թշուառներու խնամատարութեան համար կը գտնուէր նիւթապէս ամենաանձուկ պայմաններու եւ դրեթէ շուարեալ վիճակի մէջ :

Ամէն Հայ որ կը մասնակցի հանդանակութեան , պէտք է նկատի ունենայ որ իր նուիրած իւրաքանչիւր տօլարը այս կերպով պիտի բարձրանայ երկու տօլարի , եւ հետեւաբար կրկին չափով կարօտութիւն պիտի դարձանէ :

Միւս կողմէ մեր ցոյց տուած գուրդուրանքն ու զոհարելութիւնը մեր իսկ արեւակիցիներուն թշուառութեան հանդէպ , ոչ միայն պիտի բարձրացնէ մեր ազգային համբաւը օտարներու առջեւ , այլ մասնաւոր ամէնէն զօրաւոր դրդիւր պիտի ըլլայ , որպէս զի անոնք կրկնապատկեն օգնութիւն փութացնելու համար իրենց բրած Զանքերը :



Սիրելի Հայրենակիցներ՝,

Ամերիկահայ գաղութը, ազգային ամեն տեսակ պետ-  
ֆերու հանդէպ, իր հայրենասիրութեան ու սուստածեո-  
նութեան ապացոյցները ցոյց տուած է քանիցս: Վստահ եմ  
որ այս անգամ եւս անիկա արժանի պիտի գտնուի իր համ-  
բախն եւ ինքնիրեն եւ գերագոյն չափով ցոյց պիտի տայ  
իր գոհաբերութեան ոգին՝ ներկայ նզնաժամային վայրկ-  
եաններու մէջ, իհարուսն մասնակցելով հանգանակու-  
թեան:

Հետեւաբար ես կոչ կ'ընեմ Ամերիկայի բովանդակ Հա-  
յութեան:

Յանուն անոնց, որ Հայ Ազատագրութեան պայքարին  
սուաջին օրերէն սկսեալ մինչեւ այսօր, մանաւանդ վերջին  
չորս տարուան պատերազմի միջոցին, գէն ի ձեռին մար-  
տընչեցան Անկախ Հայաստանի համար եւ շատեր իրենց  
պատուական արիւնով ռոտգեցին անոր Սուրբ Հողը:

Յանուն անոնց, որ չարչարուեցան ու նահատակ ին-  
կան հալածանքի եւ տարագրութեան նամբաներու, ախտ-  
բավայրերու, բանտերու մէջ եւ կախաղաններու վրայ:

Եւ յանուն անոնց, որ դեռ կը տառապին անկարագրե-  
լի, անպատմելի աղէտներու եւ քշուառութեան նիքաննե-  
րուն մէջ, եւ որոնց՝ այդ հարիւր հազարաւոր որբերու եւ  
քշուառներու մէջ կը գտնուին Վաղուան Հայաստանի զին-  
աւորները, մտքի եւ տնտեսութեան մշակները, մեր ցեղին  
բովանդակ հաննարը եւ մեր ամբողջ յոյսը:

Որպէս զի օգնութեան ազատարար ձեռքը կարկառէք  
իրենց, այսօր, այս ժամուն իսկ, որովհետեւ արդէն ՌԻՇ  
է, եւ վաղը, գիտցէ՛ք, ՇԱՏ ՌԻՇ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ:

Կոչ կ'ընեմ ամէն կարգի ազգային հաստատութեանց  
ու կազմակերպութիւններու, նաեւ Որբախնամ, Կարմիր  
Խաչ եւ Համաբաղաբացիական Միութիւններու եւ Ընկե-  
րութիւններու եւ անխորտակ ամէն հասակի ու դասակարգի,  
որպէս զի իւրաքանչիւրն իր կարողութեան լրիւ չափով  
մասնակցի հանգանակութեանց եւ իր աջակցութիւնն ըն-

ծայէ զայն կատարեալ յաջողութիւն մը ընելու համար,  
վստահ ըլլալով որ հանգանակութեան գոյացած գումար-  
ները ապահովագոյն միջոցներով եւ խղմտութեամբ պի-  
տի յատկացուին գէր մասամբ ամոքելու Ազգին ծովացեալ  
ստառապանքը:

Հայրենակիցներ՝,

Եթէ հաւատք ու իղձն ունիք Հայ Ազգին ապագային և  
Անկախ Հայաստանի համար,

Եթէ կը յարգէք Ազատութեան համար ինկած Նահա-  
տակներու յիշատակը,

Եթէ չէք ուզեր պատասխանատու մնալ ձեր խղմին ու  
պատմութեան առջեւ,

Տուէ՛ք, առատօրէն տուէ՛ք, եւ մի գրկէք գնդ Ազգին  
վերջին բեկորներուն, մեր նահատակներու քանկագին ա-  
ւանդներուն օգնելու պատիւէն:

ԱՆԴՐԱՆԻԿ

—«»—

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԲԻՆ ԿՈՂՄԷ

Փրկութեան, Հանդանակութեան Կեդրոնական Յանձ-  
նախումբը, իր անկեղծ շնորհակալութիւնը կուզայ յայտ-  
նել՝ Ազգային հերոս Զօրավար Անդրանիկին՝ փրկութեան  
այս մեծ առաքելութիւնը Ազգ. Պատուիրակութենէն ըս-  
տանձնած ըլլալուն համար: Զօրավար Անդրանիկ, հայրե-  
նիքը պաշտպանելէ վերջ՝ կուզայ մեզի՝ իբրեւ ազատա-  
բար հրեշտակը հազարաւոր կարօտեալներու:

Մենք անվերապահօրէն խոստացած ենք՝ Զօր. Անդ.  
ոանիկի աջակցիլ փրկութեան այս կենսական եւ գերազոյն  
գործին մէջ, եւ վստահ ենք որ համակ Ամերիկահայ դա-  
պութը, ինչպէս անցեալին մէջ, այսօր ալ պիտի բանայ իր  
սիրան ու քսակը զսարբերութեան նուիրական ոգիով:

Փրկութեան սրբազան Գործը առած մեզի կուզայ

1279-2007





Հերոս Զօրավարը . հետեւինք իր ըստին . կատարենք մեր սաղաթյին պարտականութիւնը :

Փրկութեան Հանդանակութեան Կեդրոնական Յանձնախումբի Դիւանը կազմուած է հետեւեալ կերպով .  
Ատենապետ՝ ԿԵՐ . ՇԱՀԷ ՎՐԴ . ԳԱՍՊԱՐԵԱՆ  
Փոխ-Ատենապետ՝ ՏԻԱՐ ՊԱՏՐԻԿ ԿԻԷԼՊԷՆԿԵԱՆ  
Ատենադպիր՝ ՏԻԱՐ ԵՐՈՒԱՆԳ ՄԵՍԻԱՆԵԱՆ  
Փոխ-Ատենադպիր՝ ՏԻԱՐ ՄԱՂԱՔ ՊԵՐՊԷՐԵԱՆ  
Գանձապահ՝ ՏԻԱՐ ՄԻՀՐԱՆ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ  
Փոխ-Գանձապահ՝ ՏԻԱՐ Մ . Ս . ԳՕՆՏԱԶԵԱՆ  
Ընդհ . Քարտուղար՝ ՎԵՐ . Գ . ՊԵՏՐՈՍԵԱՆ

Կեդրոնական Յանձնախումբի անդամներն են , այբուբենի կարգով .

- Տիարք՝ Աղեփանդր Գէորգեան
- Աշոտ Թիրեաֆեան
- Աւետիս Պ . Սէլեան
- Վեր . Անդրանիկ Ա . Պետիկեան
- Լեմուէլ Կօստիկեան
- Կարապետ Փուշմանեան
- Հրանտ Թէլֆեան
- Յակոբ Դերձակեան
- Տոքթ . Յովհաննէս Ծովիկեան
- Վեր . Յ . Մ . Տէփոյեան
- Վահան Տիլսիգեան
- Տիգրան Տօնեան

Կազմուած է նաեւ Finance Committee մը եւ Publicity Committee մը , որոնց առաջինը պաշտօն պիտի ունենայ հակելու հաշիւներուն , պիւտճէին եւ դրամի առաքման վըրայ , իսկ երկրորդին դործը պիտի ըլլայ զարկ տալ հանդանակութեան բրորականութիւնը :

Finance Committee-ի անդամներն են .  
Տիարք՝ Հրանտ Թէլֆեան  
Աշոտ Թիրեաֆեան  
Լեմուէլ Կօստիկեան

Publicity Committee-ի անդամներն են .

- Տոքթ . Յովհաննէս Ծովիկեան
- Տիարք՝ Յակոբ Դերձակեան
- Պօղոս Նորիատ

«Փրկութեան Հանգանակութեան» Կեդրոնական Յանձնախումբին եւ ընդհ . Քարտուղարին պէտք է զիմել հետեւեալ հասցեով-

ARMENIAN LIBERTY FUND COMMITTEE  
401-403 Old South Bldg., Boston, Mass.

—«o»—

ՆԱՄԱԿՆԵՐ ԶՕՐ . ԱՆԴՐԱՆԻԿԻ ԿՈԶԻՆ Ի ՊԱՏԱՍԵԱՆ

Դեկտ . 18 , 1919

Զօրավար Անդրանիկ ,  
Յարգելի Հերոս Հայ Ազգին ,  
Թոյլ տուէք որ Ամերիկայի Հայ Ազգ . Միութիւնը բացարձակ անվերապահութեամբ արժամարէ Ձեզ , իր բարոյական եւ նիւթական համեստ ծառայութիւնները , յաջողութեամբ պատկերու համար Ձեր առաքելութիւնը , մասնաւորապէս հանդանակութեան ձեռնարկը :

Միութիւնս կը փափաքի որ իր կազմը Ձեր կողմէն նկատուի իբր Ձեր տունը , եւ սեւէ ատեն , սեւէ ծառայութեան մը պէտքի պահուն հրամայէք իրեն , բացարձակապէս վստահ ըլլալով թէ ընդառաջ պիտի երթայ սիրայօժար եւ ինքզինքը երախտապարտ պիտի նկատէ , Ձեզմէ հրամաններ ընդունելուն համար :

Խորին յարգանքներով  
Ի զիմաց Ամերիկայի Հայ Ազգ . Միութեան Կեդրոնի  
Մ . Յ . ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ՝ Քարտուղար

Յ . Գ . Հաճեցէք ներփակ ընդունել մեր Կազանդի դոյզն ընծան \$1000 .00 :  
Նոյն



Գեկտ . 19 , 1919

Քաջարի Զօրավար Անդրանիկ ,

«Ազգային Հանդանակութեան» խիստ կենսական ձևա-  
նարկին շուրջ Ձեր Հ . Բ . Ը . Միութեան Ամերիկայի Շրջա-  
նակային Յանձնաժողովին ուղղած Գեկտ . 16 թուակիր  
նամակը ստացած ենք :

Յանձնաժողովս նկատի առնելով արուած պայմաննե-  
րը եւ Հայ Ժողովուրդի ծով կարիքը , կընդունի այդպիսի  
խնդրի մը շուրջ արուած հրաւերը եւ կը արամադրէ իր բո-  
լոր կարելի միջոցները հանդանակութիւնը յաջողութեամբ  
անցնելու համար :

Մաղթելով Ձեզի յաջողութիւն

Մնամք յարգանքներով՝

Ի ԴԻՄԱՅ Հ . Բ . Ը . ՄԻՈՒԹԵԱՆ

ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ատենադպիր

Յ . Մ . ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ

Ատենապետ

ՏՈՔԹ . Կ . Յ . ԳԱԼՈՒՍՏԵԱՆ

—«o»—

Թիւ 638

Գեկտ . 20 , 1919

Նորին վսեմ . Զօրավար Անդրանիկ ,

Քաջայողթ Զօրավար ,

Պատիւ ունեցանք ստանալու Ձեր Գեկտ . 16 թուակիր  
նամակը , որով կոչ կ'ընէիք մեզ Ազգ . Պատուիրակութեան  
Ձեզ յանձնած պաշտօնին համաձայն , Ամերիկայի մէջ կա-  
տարուելիք համազգային հանդանակութեան մը մեր աջակ-  
ցութիւնը բերել :

Ի պատասխան կուգանք յայտնել Ձեզ թէ Ձեր նախա-  
դասութեան տակ այդպիսի ձեռնարկի մը աջակցիլը մեր  
ազգային եւ նուիրական պարտականութիւնը կը նկատենք :

Թող տուէք , Տէր Զօրավար , մեր այս պաշտօնական  
յանձնառութեան հետ միասին խնդրել Ձեզմէ , որ այդ հան-  
դանակութենէն , ինչպէս ազգային ուրիշ պէտքերու , Ազգ .  
Պատուիրակութեան ծախքերուն համար եւս միանուազ  
գումար մը յատկացուի :

Տեղեակ ըլլալով հանդանակութենէն դոյացած գու-  
մարին մատակարարութեան մասին Ձեր ծրագրին եւ տե-  
սութեանց , մեր կատարեալ համամտութիւնը կը յայտ-  
նենք : Կը վստիւքիք որ ինչպէս Պոլիս Ազգ . Պատրիարքա-  
րանը , նոյնպէս նաեւ Կովկաս Ամենայն Հայոց Վեհ . Հայ-  
րապետը եւ ի Կիլիկիա՝ Շնորհ . Ս . Կաթողիկոսը ներկայա-  
ցուցիչ եւ պատշաճ մասնակցութիւն ունենան՝ նպաստի  
մատակարարութեան դէթ Կեդր . Յանձնախումբերուն մէջ :  
Խորին յարգանքներով

Ի Դիմաց Հայ Առաք . Եկեղեցւոյ

Ազգ . Կեդր . Վարչութեան

Ատենադպիր

Ատենապետ եւ Տեղապահ

Ա . Ն . ՆԱԶԱՐԻԹԵԱՆ

ՇԱՀԷ Ծ . ՎՐԴ . ԳԱՍՊԱՐԵԱՆ

—«o»—

Գեկտ . 22 , 1919

Նորին վսեմ . Զօրավար Անդրանիկ ,

Սիրելի եւ Մեծանուն Զօրավար ,

Ստացանք Ձեր Գեկտ . 16 թուակիր գրութիւնը Ազգ .  
հանդանակութեան խնդրոյն նկատմամբ : Կուսակցութիւնս  
ուրախ է որ Ձեր Ամերիկա ներկայութեան շնորհիւ կարելի  
պիտի ըլլայ մեծազոյն չափերով օգնութիւն հասցնել մեր  
ատարաբայտ ազգայիններուն ծովածաւալ պէտքերուն :

Մենք մեր բոլոր միջոցները պատրաստ ենք արամա-  
դրելու առ այդ , Ձեր նախադասութեամբ կատարուելիք  
հանդանակութեան : Կը յուսանք նաեւ որ հանդանակութե-  
նէն դոյացած գումարներուն մատակարարութեան համար  
կ'ըլլան հեռատես եւ իմաստուն կարգադրութիւններ , այն-  
պէս՝ ինչպէս դուք ըրած էք Անդրիս : Այս մասին արդէն  
կ'իկ պէտք եղած հրահանգները տուած ենք Ազգ . Միու-  
թեան մեր ներկայացուցիչներուն :

ԱԶԳ . ՌԱՄԿ . ԿՈՒՍԱԿՅՈՒԹԵԱՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԱԿԻ ՆԱՀԱՆԳ . ՎԱՐՁՈՒԹԻՒՆ



Դեկտ. 22, 1919

Զօրավար Անդրանիկ,  
Յարգելի Զօրավար,

Ճիշտ ժամանակին ստացած ենք Ձեր կոչը՝ Ամերիկա-  
հայրենական մէջ հանդանակութիւն մը ձեռնարկելու հա-  
մար, ի նպատակ երկրի թշուառ հայ բեկորներուն:

Մեր շարժական վարչային ժողովին կ'սպասէինք  
անոր պատասխանը տալու համար:

Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան Նահանգ.  
Վարչութիւնը մեծապէս դնահատելով Ձեր այս նպատակա-  
յարմար կոչը՝ կուգայ յայտարարել թէ ինք բոլորանուէր  
ջանքերով պիտի աջակցի Ձեզի, որպէս զի Ձեր նախադա-  
հութեան ներքեւ կատարուելիք ընդհ. հանդանակութիւնը  
ըլլայ լիակատար եւ աննախընթաց յաջողութիւն մը:

Յարգանքներով՝

ՎԵՐԱԿԱԶՄԵԱԼ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԱՀԱՆԳ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ատենադպիր  
Բ. ԿԱՐՄԻՐԵԱՆ

Ատենապետ  
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԾՈՎԻԿԵԱՆ

—«o»—

Թիւ 1996

Դեկտ. 23, 1919

Զօր. Անդրանիկ,  
Յարգելի Զօրավար,

Ստացած ենք Ձեր Դեկտ. 16 թուակիր նամակը, Կ. Կօ-  
միտէս իր 22 Դեկտ. նիստին մէջ նկատի առնելով Ձեր ա-  
ռաջարկները եւ նկատելով ձեռնարկին կարեւորութիւնն  
ու լրջութիւնը, ինչպէս նաեւ նկատի ունենալով Կ. Կօմի-  
տէիս իրաւասութեան սահմանները, հարկ տեսաւ խնդիրը  
քննութեան առնել խորհրդակցական ժողովի մը մէջ, նախ-  
քան իր վերջնական պատասխան տալը: Ուստի կը կարծենք  
որ մինչեւ յառաջիկայ Երեքշաբթի (30 Դեկտ.) պիտի կըր-  
նանք պատասխան մը տալ: Յուսալով որ մեզմէ լսելէ ա-  
ռաջ չէք ձեռնարկէր ծրագրուած հանդանակութեան:

Մնամք յարգանք

Հ. Յ. Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ Կ. ԿՕՄԻՏԷ

Դեկտ. 29, 1919

Յարգելի Զօրավար Անդրանիկ,

Ձեր Դեկտ. 16 թուակիրը ժամանակին ստացանք, եւ  
ուրախութեամբ լսացանք որ դուք յանձն առած էք անձ-  
նուիրարար ծառայել իբր նախադահ կատարուելիք հան-  
դանակութեան ի նպատակ մեր կարօտեալներու հայրենիքի  
մէջ: Թէպէտեւ մենք վարչական ժողով մը չենք կրցած ու-  
նենալ մինչեւ այժմ, բայց իբր նախադահը Ամերիկայի Հայ  
Աւետարանական Միութեան կը վստահացնեմ թէ մեր եկե-  
ղեցիները եւ ժողովուրդները ամենայն սիրով եւ յօժարա-  
կամութեամբ պիտի մասնակցին եւ իրենց բաժինը լիով  
պիտի կատարեն: Ձեր կարգադրութիւնը ամէն կերպով գո-  
հացուցիչ է մեզի համար եւ մենք անվերապահօրէն կը  
վստահինք Ձեր կարողութեան եւ նկարագրին վրայ, եւ  
պատրաստ ենք գործակցելու ձեզի հետ ինչ կերպով որ  
կրնանք օգտակար ըլլալ:

Մնամ Ձերդ յարգանք

Ի դիմաց Հայ Աւետ. Միութեան Ամերիկայի  
Մ. Թ. ԳԱԼԱՅՃԵԱՆ՝ Նախագահ

—«o»—

Դեկտ. 30, 1919

Նորին վսեմ. Զօրավար Անդրանիկ,

Սիրելի եւ Յարգելի Զօրավար,

Ազգ. Ռամկ. Կուսակցութեան Նահանգ. վարչութիւնը  
իր վերջին նիստին մէջ նշանակած է երկու ներկայացու-  
ցիչներ Ձեր նախադահութեան տակ կազմուելիք Հանդա-  
նակիչ Յանձնախումբին իբրեւ անդամներ, որոնք կանոնա-  
ւորապէս պիտի մասնակցին նիստերուն, եւ օժանդակեն  
այս ազգօգուտ ձեռնարկին:

Ձեզի ի սրտէ յաջողութիւն մաղթելով

Յարգանքներով՝

ԱԶԳ. ՌԱՄԿ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹ. ՆԱՀԱՆԳ. ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



Թիւ 2050

Գեկտ . 31 , 1919

Զօրավար Անդրանիկին ,

Յարգելի Զօրավար ,

Կը հաստատենք մեր Գեկտ . 23 թուակիր նամակը , որով կը խնդրէինք որ քանի մը օր սպասէք , մինչեւ որ մենք ի վիճակի ըլլայինք խնդիրը հանդամանօրէն ուսումնասիրելու եւ մեր վերջնական պատասխանը տալու : Կը ցաւինք որ հակառակ մեր այդ առաջարկին դուք հանդանակութեան կոչը արդէն հրապարակ հանած էք , առանց սպասելու մեր պատասխանին :

Մենք սակայն , աւելորդ չենք նկատեր այդու ամենայնիւ հագորդել Ձեզի մեր տեսակէտը հանդանակութեան հարցին մասին :

Ըսելու հարկ չկայ թէ կատարելագոյն համամիտ ենք Ձեզ հետ որ այս գաղութը անգամ մը եւս հաւաքարար շարժի օգնութեան հասնելու համար մեր ժողովուրդի թշուառ բեկորներուն : Բայց մեր խորին համոզումով այդ գործը իրեն՝ գաղութին ներքին գործն է եւ պէտք է անոր կողմակերպումն ու ղեկավարութիւնը ձգուի գաղութին :

Նախ պէտք է կազմել իրաւասու եւ ձեռնհաս մարմին մը , որ ղեկավարար այժմ գոյութիւն չունի մեր գաղութին մէջ : Այդպիսի մարմին մը կազմելու միակ արդար եւ անառարկելի եղանակը , անկասկած ժողովրդային համեմատական ընտրութիւնն է : Եթէ կամեցողութիւն ըլլայ այդպիսի ընտրութիւն մը ամիսէն աւելի չառներ :

Հանդանակութեան արդիւնքին քանի՞ տողոսը ուր պիտի երթայ , որո՞ւ պատուակալ նախագահութեան առկ պիտի կատարուի հանդանակութիւնը , եթէ այդպիսի նախագահութեան մը հարկը տեսնուի եւ այլ մանրամասնութիւններ գաղութային մարմնի վերաբերեալ գործերն են եւ պէտք է ձգուին անոր :

Առանց սակեղծելու գաղութային մարմին մը , որ իրաւունք եւ հեղինակութիւն ունենայ գաղութին անունով խօսելու եւ գործելու , մենք վստահ ենք որ ո՛չ ծրարուած հանդանակութիւնը ակնկալուած արդիւնքը կուտայ , եւ

ու՛չ ալ կարելի կըլլայ այս գաղութը հաւաքարար եւ ամբողջաւէս լծել սեւէ ձեռնարկի :

Յուսարով թէ դուք ալ Ձեր աջակցութիւնը պիտի բերէք այդպիսի մարմին մը սակեղծելու անյետաձգելի գործին մէջ , որ անհրաժեշտ եւ անխուսափելի նախապայմանն է սեւէ համադադութային ձեռնարկի :

Յարգանքներով ,

Հ . Յ . Գ . ԿԵԴՐ . ԿՕՄԻՏԷ

—«o»—

Հեռագրական հաղորդակցութիւն Ս . Գ . Հնչ . Կուսակցութեան Ամերիկայի Գործադիր Մարմնոյ հետ :

Dec. 27, 1919

S. D. Huntchagist Central Committee,  
606 Blue Island Ave., Chicago, Ill.

Waiting for your answer to my call. Please answer. If you choose to work with send two delegates to the Committee's first meeting next Wednesday Thirty One Dec. Caply Plaza, 7 P. M. ANTRANIK

Ս . Գ . Հնչակեան Կեդրոնական Կոմիտէ  
606 Պլու Այլընս Էվինիւ , Չիքագօ , Իլ .

Կ'սպասեմ իմ կոչիս պատասխանին : Հանեցէք պատասխանել : Եթէ որոշէք մեզի հետ աշխատակցիլ՝ երկու ներկայացուցիչներ դրկեցէք Յանանախտուրի առաջին նիստին , յառաջիկայ Զորեքշաբթի , Գեկտեմբեր 31-ին , ժամը 7-ին Կ . Ե . , Բաբլի Բլազա : ԱՆԴՐԱՆԻԿ

—«o»—

Chicago, Ill. Dec. 31, 1919

General Antranik, Copley Plaza,

Our representative is on the way to see you very soon.

S. D. Huntchakian Central Committee



Գեկտ . 31 , 1919

Զիֆակօ , Իլ .

Զօրավար Անդրանիկ ,

Քաբլի Բլազա ,

Մեր ներկայացուցիչը նամբայ ելած է Ձեզի տեսնելու շուտով :

Ս . Դ . Հնչակեան կեդրոնական կօմիտէ

—«o»—

January 5, 1920

S. D. Huntchakist Party

606 Blue Island Ave. Chicago, Ill.

Your representatives have not arrived, anxiously waiting to complete Central Committee for the campaign. Wire answer to me 530 Old South Bldg., Boston, Mass.

ANTRANIK

Յունվար 5, 1920

Ս . Դ . Հնչակեան կուսակցութիւն

606 Պլու Այլէնտ Էվինկլ , Զիֆակօ , Իլ .

Ձեր ներկայացուցիչները չեն ժամանած . անակնոց կապասեմք ամբողջացնելու Քէմբրէյնի կեդրոնական Յանձնախումբը : Պառասխանը հեռագրեցէք ինձի :

530 Օլտ Սաութ-Ի Պիլտիմկլ , Պօսթըն

ԱՆԴՐԱՆԻԿ

Ծանօթ . — Զօր . Անդրանիկի այս վերջին հեռագրին չի պատասխանեց Ս . Դ . Հնչ . կուսակցութիւնը , եւ իրենց նամբայ հանած ներկայացուցիչն ալ չերեւցաւ մինչեւ վերջը :

—«o»—

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԶԵԿՈՅՑ ԱՄԵՐԻԿԱԶԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ

Ի պատասխան Զօրավար Անդրանիկի Հանդանակութեան կոչին , Հայ Առաքելական եւ Հայ Աւետարանական Եկեղեցիներու , Վերակազմեալ Հնչակեան եւ Ազգային Ռամկավարական կուսակցութեանց եւ Հայ Բ . Ը . Միութեան

Թեան ներկայացուցիչները Գեկտ . 31 , Զորեքշարթի երկ-կոյին հաւաքուելով ի Պոստոն Քաբլի Փլազա Հօթէլին մէջ , կազմեցին ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ Կեդր . Յանձնախումբը , Զօրավար Անդրանիկի նախագահութեան տակ : Ս . Դ . Հնչակեան կուսակցութիւնը լուր տուած է թէ ներկայացուցիչ կը զրկէ կարգադրութիւններ ընելու համար :

Յանձնախումբը քանի մը օրէն հանրութեան պիտի հազորդէ իր կազմին եւ հանդանակութեան վերաբերեալ մանրամասնութիւնները :

Սոյն Մարմնոյն կազմութիւնը հասարակութեան ուշադրութեան յանձնելով , կը սիրենք յուսալ , որ «Փրկութեան Հանդանակութիւն»ը յաջողութեամբ պտակելու համար ամէն Հայ իր լուսագոյն ջանքերը չպիտի խնայէ :

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ  
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆԶՆԱԽՈՒՄԲ

—«o»—

ՇԻՋԱՔԵՐԱԿԱՆ—ԿՈՉ ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ

ՕԳՆԵ՛ ԿԱՐՕՏԵԱԼԻՆ

Ի պատասխան Զօրավար Անդրանիկի հանդանակութեան կոչին , Ամերիկահայ զաղութիւն զանազան հասանքները , իրենց ներկայացուցիչ մարմիններու շնորհիւ փութացին՝ Փրկութեան Հանդանակութեան համար Զօրավար Անդրանիկի խոստանալ՝ իրենց լիակատար եւ բոլորանուէր աջակցութիւնը :

Հայրենիքի ազգատեղեւորուն փրկութեան գործը , Հայութեան դերագոյն եւ սրբազան պարտականութիւնը նկատելով , Զօր . Անդրանիկի աջակցող բոլոր հասանքներն ալ անխափր , հայրենասիրական դեղեցիկ մրցակցութեամբ , կուզանք Ամերիկահայութեան յայտնել իրենց որոշումը , լոկ փրկութեան , դուրի եւ սիրոյ զգացումներուն վրայ



հիմնել իրենց գործունէութիւնը եւ թոյլ չտալ որ քաղաքական տեսակէտներու տարբերութիւններ եւ տեղական հանգամանք ունեցող հարցեր՝ այս կենսական եւ տոհմազէն հանդանակութեան ի նպաստ կատարուելիք ջանադրութիւնները տկարացնելու պատճառ հանդիսանան :

Ամէն հայ եւ ամէն հայրենասէր կազմակերպութիւն ընդգրկելու է Հերոս Զօրավարին նշանաբանը՝ որ լուսաւոր բառերով կը բացատրէ հանդանակութեան նպատակը. «Օգնէ՛ կարօտեալին» :

Օգնէ՛ կարօտեալին, բա՛ց՝ սիրող եւ քսակդ, կարօտեալը մէկ մարդ է, այլ համակ Հայ Ազգը, որուն ջարդերէ եւ հալածանքներէ մաղապուր ազատած թանկագին բեկորները, հազարաւոր սրբեր են անօթի, մերկ, կմախացած. մայրեր են, քոյրեր են, որ չորցած տերեւներու նման կը թափին անգութ աշխարհի մը ամայի ճամբաներուն վրայ եւ կը հիւժին՝ հոգեկան տուալտումներով՝ հարէմներու դարշելի մթնոլորտին մէջ, — կարօտեալը նաև զինուոր է, — այն հերոսներն են որ ամբողջ հինդ տարի տակացին սովին, ցուրտին, քամահրեցին կեանքը եւ կուռեցան՝ Հայ ցեղը բնաջնջումէ ազատելու համար. ասոնք ալ մերկ են, ցնցոտիներ եւ բղբոտած շորեր միայն ունին : Հագուեցուցէք զանոնք, տաքցուցէք իրենց մարմինը եւ ձեր զթառատ գորովով ջերմութիւն տուէք անոնց սրտերուն :

Հանգանակութիւնը բացուած է արդէն :

Պոստոնի մէջ կազմուած է, Զօրավար Անդրանիկի նախագահութեան տակ, Կեդր. Հանդանակիչ Յանձնախումբ մը, որուն մէջ իրենց ներկայացուցիչներն ունին. — Հայ Առաքելական եւ Հայ Աւետարանական Եկեղեցիները, Վերակազմեալ Հնչակեան, Հ. Ազգ. Ռամկավար Կուսակցութիւնները եւ Հ. Բ. Ընդհ. Միութիւնը :

Այժմէն սակայն, Կեդր. Յանձնախումբը իր առաջին նիստին մէջ անցուց հետեւեալ սրտշումները, որոնք ձեր ուշադրութեան կը յանձնուին :

1. — Հանդանակութեան անունը պիտի ըլլայ՝ ՓրկոՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ :

2. — Հանդանակիչ Յանձնախումբը Պոստոնի մէջ պիտի ունենայ կեդրոնական Քարտուղար մը, որ հանդանակութեանց տեսչութեան, պիտի վարէ հանդանակութեանց մեքենական գործողութիւնները, — պիտի գործածէ գործիչներ, պիտի թղթակցի բոլոր քաղաքներու եւ գիւղերու մէջ կազմուած տեղական Հանդանակիչ Յանձնախումբերուն հետ, պիտի պահէ տոմարները, ըստ այն ցուցմունքներուն որ արուած են Զօր. Անդրանիկի հրատարակած մեծ կոչին մէջ :

Անմիջապէս որ ստանաք Կեդր. Յանձնախումբիս այս շրջաբերական կոչը, նախաձեռնարկ հանդիսացէք յարարելութեան մտնելու՝ հանդանակութեան իրենց աջակցութիւնը խոստացող հոսանքներու եւ հաստատութեանց մասնաճիւղերուն հետ եւ զանոնք հրաւիրելով ընդհանուր ժողով՝ կազմեցէք տեղական Յանձնախումբ՝ Կեդրոնին հասցնելով անյապաղ՝ ձեր անուններն ու հասցէները :

3. — Տեղական Յանձնախումբեր իրաւասութիւն պիտի ունենան՝ զիրենք բազկացնող հոսանքներէն եւ հաստատութիւններէն զատ, գործակցութեան հրաւիրելու այն մարմինները որոնց օժանդակութիւնը օգտակար եւ անհրաժեշտ կը նկատեն հանդանակութեանց յաջողութեան :

4. — Տեղական Յանձնախումբեր, պէտք է հետամուտ ըլլան՝ Կեդր. Վարչութեան հասցնելու անուններն այն բոլոր վայրերուն՝ որոնք անձանօթ են եւ ցրուած, ինչպէս՝ մեծ գործարաններ կամ հանքեր պարունակող գործաւորական կեդրոնները : Տեղական Յանձնախումբեր, իրենց արամադրելի ուժերէն զատ պիտի ունենան՝ Կեդր. Յանձնախումբի անդամներուն, անոր նշանակած մնայուն գործիչներուն, Հ. Բ. Ընդհ. Միութեան եւ Հայ Ազգ. Միութեան, ինչպէս նաև՝ Վերակազմեալ Հնչակեան եւ Հ. Ա. Ռամկավար Կուսակցութեանց տեղական գործիչներուն բոլորանուէր աջակցութիւնը : Տեղական Յանձնախումբերու իմաստութեան կը ձգուի, իրենց շրջանակին պայմաններուն համաձայն կազմակերպել հանդանակութիւնները՝ միշտ յարարելութեան մէջ ըլլալով Կեդրոնի մնայուն Քարտուղարին հետ :



5.— Ամերիկան բաժնուած է հետեւեալ շրջանակներուն, որոնց իւրաքանչիւրին համար սրտշուած է ունենալ մեայուն գործիչ մը՝ ի բաց առեալ Նիւ Ինկլէյնտի շրջանակը: Այս շրջանակներն են.—Քալիֆորնիա, Միսսուրի Ուէսթ եւ Գանատա, Նիւ Ինկլէյնտ եւ Նիւ Եորք:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ

—«o»—

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ—ՀՐԱՀԱՆԳ ԹԻՒ 2

ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ ՏԵՂԱԿԱՆ

ՀԱՆԳԱՆԱԿԻՉ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻ ԵՐՐՈՒՆ

Յարգելի Հայրենակիցներ,

Փրկութեան Հանգանակութիւնը՝ իբր արձագանդ Զօրավար Անդրանիկի կոչին՝ աննախընթաց խանդավառութեամբ մը սկսած եւ լաւ թափով յառաջ կերթայ: Նկատի առնելով երկրի սպաննացող անմիջական պէտքերը եւ հանգանակութիւնը որքան կարելի է շուտ ի կատար հանելու հարցը՝ Կեդր. Յանձնախումբս կը փութայ հազարգել ձեզ մի քանի կարեւոր հրահանգներ, որոնց ուշադիր գործադրութիւնը մեծապէս պիտի նպաստէ ձեր տեղւոյն հանգանակութեան, ինչպէս նաեւ ընդհանուր հանգանակութեան հետ կապ ունեցող ուրիշ կարեւոր գործերուն:

1.— Փորձառութեամբ դիտցած ըլլալով թէ հանգանակային ժողովէն առաջ թափուած ջանքերը մեծապէս կը նպաստեն հանգանակութեան յաջող ելքին, զօրաւոր կերպով կը յանձնարարենք որ ջանաք նախապէս տեղւոյդ բարեկեցիկ ազգայիններուն գիմել անձամբ եւ կամ այդ նպատակին համար սարքուած յատուկ երեկոյթի մը առթիւ, իրենց խոշոր գումարները ապահովելու, եւ այդ ապահովուած խոստումներով ձեր հանգանակութիւնը բանալու:

2.— Խիստ կարեւոր է մասնաւոր ուշադրութիւն ընծայել հետեւեալ կէտերուն.

Ա. Հանգանակութիւնները կանխիկ են:

Բ. Հանգանակութիւններու արդիւնքը ամբողջովին պիտի կրկնապատկուի Հայաստան Ամերիկեան Ընկերութեան մը կողմէ:

3.— Հանգանակային ժողովին յաջողութիւնը շատ մեծ չափով կախուած ըլլալով ատենապետին կարողութենէն, պիտի թելադրենք որ տեղւոյդ մէջ գտնուող կարողագոյն եւ յարմարագոյն անձը ընտրէք օրուան իբր ատենապետ:

4.— Հանգանակային ժողովին մէջ վաւաքուած յաջողութիւնը ձեռք բերելու համար պիտի թելադրէինք որ նախապէս պատրաստ ունենաք ձեր հանգանակիչ մարմինը (ըջըրդ) որոնք բնականաբար ըլլալու են վարժ գրողներ եւ որոնք իրենց ստանձնելիք գործին մանրամասնութեանը նախապէս տիրացած ըլլալու են:

5.— Հաշիւները մաքուր պահելու համար խիստ կարեւոր է հետեւեալ կէտերուն մասնաւոր ուշադրութիւն տալ.

Ա. Նուիրատուներուն անուններն և հասցէները առնել:

Բ. Նուիրատուութեանց համար երեք ցանկեր պարաստել, որոնցմէ մէկը Փրկութեան Հանգանակութեան Կեդր. Հանգ. Յանձնախումբիս ղրկուելու է, մին տեղւոյդ մէջ պահուելու է, իսկ երկրորդը ղրկուելու է Կեդր. Հանգ. Յանձնախումբին գանձապետին՝ որուն հասցէն է հետեւեալը. Mr. M. Karagheusian, 354 Fourth Ave., New York City.

Գ. Հանգանակութեան արդիւնքը որքան կարելի է շուտ ղրկուելու է ոչ քէ գանձապետին հրամանին, այլ՝ հետեւեալ կերպով.— Արմինիքը Լիպըրթի Ֆընտ (Armenian Liberty Fund): Ոչ մէկ պարագայի տակ ոեւէ անձի հրամանին դրամ կամ չէֆ ղրկուելու են:

6.— Նկատելով որ հանգանակութիւնները կանխիկ են եւ դրամները պահելու համար անհարկի մտահոգութիւններ պիտի ըլլան Կեդրոնի գանձապետին ղրկուելէ առաջ, պիտի թելադրէինք որ նախ քան հանգանակութեան ժո-



դովը՝ տեղւոյդ պանքաներէն միոյն հետ հասկացողութիւն մը դոյաջնէք, որպէս զի հանգանակութեան հրատարակային ժողովէն անմիջապէս վերջը որոշեալ ժամուն պանքին կողմէն գրաւոր կերպով վաւերացուած անձին միայն դրամները յանձնուին :

7.— Հանգանակութեան մասնակցողներուն տրուելիք ստացականներուն եւ ապագայ մանրամասն հաշուետուութեան կանոնաւորութեան համար շատ կարեւոր է վերոյիշեալ ցանկերէն կեդրոնս զրկուելիք ցանկին վրայ դնել նուիրատուին անունէն, մականունէն եւ հասցէն զատ նաեւ իր ծննդավայրը :

8.— Հանգանակութեան մասնակցողներու տրուելու համար, շատ խնամով պատրաստուած ստացականներ պիտի զրկուին տեղական Հանգանակիչ Յանձնախումբերուն, որոնցմէ կը խնդրուի որ ստացականները շատ զգուշութեամբ գործածեն, եթէ թիւ մը սխալմամբ գործածուելով ուժայեա դառնայ, պէտք է զայն իր տեղը փակցնել եւ բոլոր կտրոններուն, ինչպէս նաեւ միւս ոչ գործածուած թիւերուն հետ վերագարձնել կեդրոն :

9.— Կեդր. Հանգանակիչ Յանձնախումբս տեղական Հանգանակիչ Յանձնախումբերուն մասնաւոր զիւրութիւն մը տալու համար պիտի զրկէ ամէն մէկ յանձնախումբի համար յատկապէս պատրաստուած մեծազիր յայտարարութիւններ, այսմանաւ որ տեղական յանձնախումբեր կեդր. Յանձնախումբիս ժամանակին զրկեն իրենց ժողովին մանրամասնութիւնները, այսինքն՝ ժողովին տեղը, ժամը եւայլն :

10.— Յանձնախումբս պիտի տրամադրէ նաեւ հանգանակութեան ժողովին համար յարմար ատենախօս, երգիչ եւ հանգանակութիւնը վարող անձ մը, ի հարկին :

Լիւյսյս նք թէ ամէն տեղական հանգանակիչ յանձնախումբեր ողի ի բոլին պիտի աշխատին Փրկութեան Հանգանակութիւնը կատարեալ յաջողութիւն մը ընելու, որուն

արդիւնքին ակնկառոյց կսպասեն մեր անթիւ թշուառներ եւ սովալլուկ որբեր մեր սիրելի Հայրենիքին մէջ :

Մաղթելով ձեզի յաջողութիւն,

Մնամք սիրալիբ յարգանքներով,

Ի դիմաց Փրկութեան Հանգանակութեան

Կեդր. Հանգ. Յանձնախումբի

Ատենապետ

Ատենադպիր

ԵՐՈՒԱՆԴ ՄԵՍԻԱՆԱՆ

ՇԱՀԷ Ծ. ՎԱՐԴ. ԳԱՍՊԱՐԵԱՆ



Մամուլի Յանձնախումբին կողմէ հետեւեալ նամակը զրկուեցաւ Ամբրիկահայ մասնորական եւ առեւտրական ազգայիններու :

Յարգելի Հայրենակից,

Ներկայ Փրկութեան ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ կատարեալ յաջողութիւն մը ընելու համար կարեւոր կը նկատենք հանրածանօթ ազգայիններու բարոյական ոյժն եւս գործածել, անոնց՝ այդ մասին ունեցած խորհուրդները կամ թելադրութիւնները ժողովուրդին առջեւ դնելով :

Ուստի մեծապէս սատարած պիտի ըլլաք այս նուիրական գործին, եթէ հաճիք մեզ զրկել առ առաւելն 50 բառ կան գործին, եթէ հաճիք մեզ զրկել առ առաւելն 50 բառ պարունակող զրութիւն մը, որուն նպատակը բլլայ գլխաւորապէս ցուցնել թէ ինչո՞ւ այս հանգանակութիւնը յաջողութիւն մը ըլլալու է, միեւնոյն ատեն, հրաման տալով մեզ այդ զրութիւնը օգտագործելու պատշաճ միջոցներով : Վստահ ենք թէ պիտի չմերժէք մեր այս հայրենասիրական աղերսը :

Մնամք յարգանքներով

Փրկութեան ՀԱՆԳ. ՄԱՄՈՒԼԻ ՅԱՆՁՆԱԿՈՒԹԻՒՆ



«ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ»

Յանձնախումբս հանոյժով հրատարակութեան կը յանձնէ երկու ֆամակներ, որ այնքան յստակօրէն կը շեշտեն «Փրկութեան Հանգանակութեան» կարեւորութիւնը: Մենք վստահ ենք քէ Գեորգի. Բարգէն Եպիսկոպոսի հայրենաշունչ գրութիւնը, եւ Հայ Հանրապետութեան Ամերիկայի Պատգամաւորութեան խորհրդատու անդամ Տիար Յ. Փիլապեանի իրապաշտ ու ազդեցիկ լեզուի պիտի օգնեն ամէն Հայու որ իր պարտականութիւնը ֆանչնայ գոհաբերութեան այս գերագոյն վայրկեանին մէջ:

«ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԵԱՆ»  
ՄԱՄՈՒԼԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

—«o»—

«ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ»

Ես չեմ ուզեր, եւ մա'նաւանդ չեմ կրնար երեւակայել, որ Հայ-մարդ մը գտնուի Ամերիկայի Հայոց մէջ, որ չուզէ իր լուծան ձգել ազգային փրկութեան զանձանակին մէջ:

Այս մեծ եւ բարեկեցիկ զաղութը հազար կերպով աւաւաւ ի նպաստ ազգային պէտքերու եւ կուտայ միշտ...:

Բայց այս անգամ տալու կոչը կուգայ կը հասնի մեզ ուղղակի Հայաստանի ծոցէն, մեր պանծալի Հայրենիքի խորերէն, որու ոգին կը մարմնացնէ մեր մէջ Զօրավար Անդրանիկ:

Երբ Անդրանիկ կոչ կ'ընէր մեր երիտասարդներուն՝ մարտնչելու համար մեր արեան եւ մեր հողին թշնամեաց դէմ, ամէն ոք կը խանդավառուէր եւ կը փութար զինակցելու մեր ազգային Դիւցազնին:

Անդրանիկ առ այժմ վար դրած է իր գէնքը, եւ կոչ կ'ընէ մեզ, որ օգնենք մեր թշուառացած Հայրենիքին, որու ցաւերն ու վէրքերը անձամբ զգացած եւ շօշափած է ինքն:

Միթէ Հայրենիքի ազատութեան համար իր արիւնքը նըւիրող Հայը, այսօր պիտի չուիրէ՞ իր վաստակին մէկ մասը: Ո՛չ թէ ամբողջը, այլ մէկ մասը միայն...:

Պէտք է փրկել մեր Ազգին անօթի, տկուղ եւ հիւանդ բեկորները...:

Կրնա՞յ ըլլալ ասկից աւելի հզօր, ասկից աւելի ցնցիչ կոչ մը:

Հայաստանին կոչն է այս, ապրելու իրաւունք ունեցող ժողովուրդի մը ազազա'կն է այս:

Եւ ա'յս կոչին, եւ ա'յս ազազակին հարազատ արձազանդն է Զօր. Անդրանիկ:

Լսե'նք այդ կոչը, յարգե'նք այդ ազազակը, եւ երկուզածութեամբ ու սիրով նուիրենք մեր վաստակին մէկ մասը Մայր Հայաստանի փրկութեան համար... անօթութեան, մերկութեան եւ հիւանդութեան ճիրաններէն:

ԲԱՒԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Իսր. Ուօրըրք-աւու, Յունվ. 31, 1920

—«o»—

Նիւ Եորք, Յունվ. 31, 1920

«Փրկութ. Հանգանակութեան» Մամուլի Յանձնախումբին

Մեծայարդ Պարոններ, Զեր ամսոյս 27ին գրած նամակին ի պատասխան պատիւ ունիմ հաղորդելու հետեւեալը.

Բարեգործութիւնը հետեւանքն է բարոյական-կրօնական վերապրումների եւ ոչ հանրային-քաղաքական գործունէութեան: Բարեգործութեան համար չէ պահանջուած համազօրծակցութիւն, ընդհակառակը՝ աջ ձեռքը չը պիտի զիտենայ, թէ ինչ է անում ձախը:

Թող ամէն ոք խոնարհի Սրբազան Հայրենիքի առաջ, որ գտել է իր ազատութիւնը անասման տանջանքների գնով: Թող ամէն ոք հետեւի իր սրտի առաջի մաքուր պահանջին եւ այն ժամանակ, տալով ամէն ինչ, կը ցաւի որ տուել է այդքան քիչ:

Ընդունեցէք յարգանքներ իմ ողջօյնը,  
Յ. ՓԻՐԱԼԵԱՆ



«ՓՐԿՈՒԹԵԱՆ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ»

«Փրկութեան Հանգանակութեան» Մամուլի Յանձնախումբս մեծ հանոյժով հրատարակութեան կը յանձնէ հետեւեալ նամակները, որոնց լեզուն այնքան պերնախօս ու պարունակած կոչը այնքան անդիմադրելի է, որ մեր կողմէն բառ մը իսկ աւելորդ կը նկատենք աւելցնել: Առաջին նամակը գրուած է Զօր. Հարպըրտի Առաքելութեան անդամ՝ նախկին Տեղակալ Տիար Յ. Խաչատուրեանի կողմէ, որ իր աչքերով տեսած է Կովկասէն մինչեւ Կիլիկիա երկաթուղի թշուառութեան գիծը, իսկ երկրորդը՝ ՏՀԸ Նիւ Արմենիաի եռանդուն ու ազգանուէր հմբագրին՝ Տիար Արշակ Մահտեսեանի կողմէ:

—«o»—

Քեմպրին, Յունիլ . 28, 1920

Յարգելի Պարոններ,

Մամուլի Յանձ. «Փրկութեան Հանգանակութեան»,

Աւելի դժուար է եւ շատ աւելի վեհանձնութիւն կը պահանջէ ազգին համար անկեղծօրէն ծառայելով ապրիլ քան թէ անոր սիրոյն համար մեռնիլ պատերազմի դաշտին վրայ:

Ամերիկահայերը չափով մը հայթայթեցին պատերազմող սլոյթեր, եւ այսօր անոնք կը դանուին աւելի վեհ պարտականութեան մը առջեւ:

Երկրի Հայութեան ֆիզիքական ամբողջութիւնը վրտանդի մէջ է մի քանի տարիներէ ի վեր: Ամօթ է Ամերիկահայութեան որ ամբողջ 1919ի շրջանին չօշափելի նըպաստներով օգնած չէ հոգեւարքի մէջ գտնուող Հայութեան, եւ իր պարտազանցութեամբը պատճառ եղած է տասնեակ հազարներով Հայերու ոչնչացման:

Եթէ իրապէս պարտաճանաչ հայրենասիրութիւն ունի Ամերիկահայութիւնը, պէտք է ան մոռնայ երեւակայական սկզբունքային վիճարանութիւնները եւ անմիջապէս օգնէ լիառատօրէն «Փրկութեան Հանգանակութեան»: Տօ-

լար մը աւելի օգտակար պիտի ըլլայ այսօր քան թէ տասնեակ մը տօլարներ մի քանի ամիս վերջը: Եւ կը վախնամ որ մի քանի ամիս վերջը «արդէն շատ ուշ» է:

ՅՐԹ. Յ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

—«o»—

Նիւ Եորք, Յունիլ . 28, 1920

«Փրկութեան Հանգանակութիւն»ի

Մամուլի Յանձնախումբ, Պոստոն, Մէս.

Սիրելի Բարեկամներ,

Երբ Թուրք հորդաններ պաշարեցին Պօլիսը, Կայսրը գուշակելով վերահաս աղէտը՝ կոչ ըրաւ քաղաքացիներու դրամական զնչողութեանց, որոնք պիտի գործածուէին հայթայթելու պաշտպանութեան միջոցներ: Ո՛չ ոք պատասխանեց Կայսեր կոչին:

Քանի մը օր վերջ, սակայն, թշնամւոյն հրետանին քանդեց Պօլսոյ պարիսպները ու վայրագ մարդախոշոջներ ներս խուժեցին՝ հուրով եւ սուրով: Ահարեկ քաղաքացիներ, որոնք նախապէս մերժեցին էին ընել քիչ մը զոհողութիւն, առին իրենց բոլոր ոսկի դանձերը ու դրին Կայսեր ոտքին առջեւ: Կայսրը վռնտեց այս մարդիկը պժգանօք, ու սրտաց:

«Հիմա գացէ՛ք ու մեռէ՛ք ձեր դրամին հետ, դո՛ւք որ չէիք ուզեր ապրիլ առանց անոր»:

Ամերիկահայեր մասնակցելու են առատաձեռնօրէն «Փրկութեան Հանգանակութիւն»ին, մի գուցէ Մայր Հայաստան օր մը գոռայ անոնց երեսին.

